

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/4

23 հունիսի 2015 թ.

Քննարկվեց «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ 25.05.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի 18.05.2015 թ-ի վարչական տույժ նշանակելու մասին թիվ 104/10 որոշման դեմ:

«Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

18.05.2015թ. ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի կողմից կայացվել է «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշում (թիվ 104/10) (այսուհետ՝ Որոշում), համաձայն որի Մեխակ Սարգսի Գաբրիելյանը թույլ է տվել ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մաքսային կանոնների խախտում և ենթարկվել վարչական պատասխանատվության՝ տուգանվել է ներմուծված ապրանքները՝ անկար խողովակները վերամշակելու և արտադրանքը սահմանված ժամկետում չարտահանելու պատճառով «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով նախատեսված մաքսային վճարների մեծության մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով 9,293,260 դրամ:

«Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) գտնում է, որ Որոշումը հիմնավորված չէ, ուստի և ենթակա է վերացման հետևյալ պատճառաբանությամբ.

1) Որոշմամբ նշվել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է ՀՀ մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն: Իսկ համաձայն նույն հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

Տվյալ դեպքում, Որոշման ներածական հատվածից հետևում է, որ՝

1. «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ-ի կողմից 25.10.2013 թ.-ին ներմուծվել է 170.880 կգ սև մետաղյա խողովակներ վերամշակման նպատակով, սակայն 14.05.2015թ. դրությամբ ՀՀ ՖՆ ԱՏՄ մաքսային ձևակերպումների բաժնի պետի պաշտոնակատարի կողմից տրված տեղեկության համաձայն չի ապահովվել 126.575 կգ խողովակների վերաարտահանումը, վերահայտարարագրումը այլ մաքսային ընթացակարգով, ինչպես նաև չի ապահովվել դրանց ձևակերպումը «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով:

2. Սակայն տեղեկատվության մեջ բացակայում է պատճառը, թե ինչու «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ տնօրենը չի իրականացրել տվյալ գործողություններից թեկուզ մեկը: Արարատյան տարածաշրջանային մաքսատան նշված պաշտոնյաներին հայտնի էր, որ ընկերությունը Առեկսիմ բանկի գործողությունների արդյունքում զրկվել է իր

անշարժ և հիմնական միջոցներից, և բնականաբար տնտեսական գործունեություն ծավալելու հնարավորությունից:

3. Արարատյան տարածաշրջանային մաքսատան պաշտոնյաները գործարանի տարածք մուտք են գործել Առեկսիմ բանկի թույլտվությամբ և ուղեկցությամբ:

4. Մաքսատան պաշտոնյաները գործարանում հաշվառել են չվերամշակված խողովակներ, կիսաֆաբրիկատներ և պատրաստի արտադրանք:

Փաստորեն, վերոգրյալ իրավաբանական փաստերից հետևում է, որ՝

ա) «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ-ն 25.10.2013թ.-ին ներմուծել է 170.880 կգ սև մետաղյա խողովակներ վերամշակման նպատակով, որից վերամշակել և արտահանել է 44.305 կգ: «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ սև մետաղյա խողովակները (լեգերացված պողպատյա խողովակներ) ներմուծում է ավտոմեքենայի բնական գազի բարձր ճնշման բալոններ արտագրելու համար:

Սակայն, վերոգրյալ իրավաբանական փաստերից չի հետևում, որ

ա) «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ վերջին արտահանումը իրականացրել է 2014թ. հոկտեմբեր-նոյեմբերին, որը տևել է շուրջ մեկ ամիս և մեծ դժվարությամբ, որը կապված էր վարկատու բանկի՝ Առեկսիմ բանկի հարուցած խոչընդոտներով:

բ) Բանկը, «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ շենք-շինություններն ու հիմնական միջոցները դարձրել է իր անունով և գործարանում կարգել է ոստիկանական պահակային ծառայություն և գրկել ընկերությանը գործունեություն ծավալելու հնարավորությունից:

գ) Ընկերությունն ունի պատրաստի արտադրանք, սակայն բանկի անօրինական գործողությունների պատճառով չի կարողանում արտահանել:

դ) Ընկերությունը դադարեցրել է իր գործունեությունը և դատական կարգով փորձում է լուծել բանկի կողմից հարուցված խոչընդոտները:

ե) Ընկերությունը բազմիցս դիմել է Առեկսիմ բանկին արտահանման խոչընդոտը վերացնելու խնդրանքով, սակայն մերժվել է:

Վերոգրյալից հետևում է, որ ներմուծված խողովակներից պատրաստված արտադրանքի արտահանումը չի իրականացվել երրորդ ուժի՝ Առեկսիմ բանկի արգելքի հետևանքով:

Հետևաբար,

ա. Մեխակ Գաբրիելյանի նկատմամբ վարչական պատասխանատվության ենթարկելու որոշումը ակնհայտ անհիմն է, քանի որ համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի վարչական պատասխանատվության ենթակա են ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար:

բ. Մեխակ Գաբրիելյանը ոչ դիտավորյալ և ոչ էլ անզգուշորեն չի խախտել ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետը:

գ. Մեխակ Գաբրիելյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետը «խախտել» է իր կամքից անկախ, գրկված լինելով տիրապետելու ընկերության ներմուծած խողովակները, իսկ պատրաստի արտադրանքը արտահանելու՝ արտաքին ուժի՝ տվյալ պարագայում Առեկսիմ բանկի անօրինական գործունեության հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն

ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:

Այս դեպքում կոպտորեն խախտվել է քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը՝ քանի որ ընկերությունը գրկվել է տիրապետելու իր ներմուծած հումքը և պատրաստի արտադրանքը:

«Մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է «Մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող «Միջազգային պայմանագրերով «Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վերոգրյալից հետևում է, որ մաքսային մարմնի կողմից կայացված Որոշումն ակնհայտ անհիմն է, առանց քննության առնելու գործի իրական փաստական հանգամանքները Մեխակ Գաբրիելյանին ենթարկել են վարչական պատասխանատվության:

Ընկերությունը գտնում է, որ մաքսային մարմնի կողմից Մեխակ Գաբրիելյանին պատասխանատվության ենթարկելը հակասում է «Սահմանադրության 8-րդ հոդվածին, որ «-ում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: «-ում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:

Վերոգրյալից հետևում է, որ խախտվել է ընկերության տնտեսական գործունեություն իրականացնելու իրավունքը:

Վարչական իրավախախտումների մասին «Օրենսգրքի 14-րդ, 17-րդ, 18-րդ հոդվածների դրույթներից հետևում է, որ չնայած Մ.Գաբրիելյանը չի իրականացրել նշված օրենսգրքի 14-րդ հոդվածի պահանջները, սակայն դա կատարվել է իր կամքից անկախ՝ երրորդ ուժի, տվյալ դեպքում Առեկսիմ բանկի անօրինական գործողությունների արդյունքում: Իսկ օրենսգրքի 17-րդ և 18-րդ հոդվածների համաձայն Մ.Գաբրիելյանը վարչական պատասխանատվության չպետք է ենթարկվեր:

Իրավական ակտերի մասին «Օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ Անձինք ազատ են կատարել այն, ինչ արգելված չէ օրենքով կամ օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում օրենսդրական այլ ակտերով, եթե դրա հետևանքով չեն խախտվի այլոց իրավունքները, ազատությունները, պատիվն ու բարի համբավը (մաս 1-ին): Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, ինչպես նաև օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում՝ օրենսդրական այլ ակտերով: Պարտականությունների կատարման կարգը, պայմանները և ծավալը որոշում են օրենքով, իսկ օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում՝ օրենսդրական այլ ակտերով: Անձինք կարող են ենթարկվել պատասխանատվության միայն օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և չափով (մաս 2-րդ):

Վարչական տույժ նշանակելիս պատկան մարմինը հաշվի չի առել Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի երկրորդ մասի և 33-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջները:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վերոգրյալից ավելի քան ակնհայտ է, որ վարչական տույժ նշանակող մարմինը անձին ենթարկելով պատասխանատվության գործել է առանց նյութերի պատշաճ և բազմակողմանի քննության, առանց հաշվի առնելու այն իրավիճակը, որում իր կամքից անկախ հայտնվել է ընկերությունը և նրա տնօրենը:

Ելնելով վերոգրյալից՝ Մեխակ Գաբրիելյանը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի «Վարչական տույժ նշանակելու մասին» 18.05.2015 թ. թիվ 104/10 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետը, վերանայելով «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ տնօրեն Մեխակ Գաբրիելյանի կողմից մաքսային կանոնների խախտում կատարելու վերաբերյալ նյութերը պարզել է, որ 25.10.2013թ-ին թիվ C 41964 մաքսային հայտարարագրով «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ անունով 365 օր ժամկետով հայտարարագրվել են 170.880 կգ ոչ ցինկապատ սև մետաղյա խողովակներ, որոնցից 126.575 կգ խողովակները սահմանված ժամկետում չեն վերաարտահանվել, չեն վերահայտարարագրվել այլ մաքսային ընթացակարգով, կամ չեն ձևակերպվել «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով:

Նշված փաստի առթիվ ՀՀ ՖՆ ԱՏՄ ԳՀՀ բաժնի ավագ մաքսային տեսուչ-իրավաբանի կողմից 18.04.2015 թ-ին ընկերության տնօրեն Մեխակ Գաբրիելյանի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝ հետագա արտահանման պարտավորությամբ ՀՀ ներմուծված ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների համար «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամ:

Գործի քննությունը նշանակվել է սույն թվականի մայիսի 7-ին, ժամը 10:30-ին, ինչի մասին ընկերության տնօրենը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն վերջինս չի ներկայացել գործի քննությանը: Այնուհետև, գործի քննությունը հետաձգվել է և նշանակվել է սույն թվականի մայիսի 18-ին, ժամը 10:30-ին, ինչի մասին ընկերության տնօրենը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն Մ.Գաբրիելյանը չի ներկայացել գործի քննությանը: Հետևաբար գործի քննությունն իրականացվել է իրավախախտում կատարած անձի բացակայությամբ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է ՀՀ մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն: Իսկ համաձայն նույն հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության: Տվյալ դեպքում մաքսային հսկողության և մաքսային ձևակերպումների հետ կապված գործունեության ընթացքում ի հայտ եկած մաքսային կանոնների խախտումների համար պատասխանատվությունը կրում է ապրանքներ տեղափոխող անձը, այսինքն՝ «Գոլդեն Փիլը» ՍՊԸ տնօրեն Մեխակ Գաբրիելյանը:

Նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ 25.10.2013 թ-ին թիվ C 41964 մաքսային հայտարարագրով «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով 365 օր ժամկետով «Գոլդեն Փիլը» ՍՊԸ անունով հայտարարագրվել են 170.880 կգ ոչ ցինկապատ սև մետաղյա խողովակներ, սակայն ընկերության տնօրեն Մեխակ Գաբրիելյանը սահմանված ժամկետում չի ապահովել 126.575 կգ խողովակների վերաարտահանումը, վերահայտարարագրումը այլ մաքսային ընթացակարգով, ինչպես նաև չի ապահովել դրանց ձևակերպումը «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, այսինքն՝ Մեխակ Գաբրիելյանը թույլ է տվել մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մաքսային կանոնների խախտում: Իսկ համաձայն ՀՀ ՖՆ ԱՏՄ մաքսային ձևակերպումների բաժնի պետի պաշտոնակատարի կողմից 14.05.2015 թ-ին տրված տեղեկության՝ վերը նշված ապրանքը խախտման օրվա՝ 15.04.2015 թ-ի դրությամբ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով հայտարարագրման ժամանակ կառաջանար 18.586.520 ՀՀ դրամ մաքսային վճարների վճարման պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 206-րդ և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 14-րդ, 32-րդ և 234-րդ հոդվածներով ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետը 18.05.2015 թ-ին կայացրել է թիվ 104/10 որոշումը, որով մաքսային կանոնների խախտում կատարելու համար Մեխակ Գաբրիելյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 15.04.2015 թ-ի դրությամբ 126.575 կգ խողովակների համար «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով նախատեսված մաքսային վճարների մեծության՝ 18.586.520 ՀՀ դրամի 50 տոկոսի չափով՝ գումարով 9.293.260 ՀՀ դրամ:

Քննարկվող դեպքում 25.10.2013 թ-ին թիվ C 41964 մաքսային հայտարարագրով «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով 365 օր ժամկետով «Գոլդեն Փիլը» ՍՊԸ անունով հայտարարագրվել են 170.880 կգ ոչ ցինկապատ սև մետաղյա խողովակներ, սակայն ընկերության տնօրեն Մեխակ Գաբրիելյանը սահմանված ժամկետում չի ապահովել 126.575 կգ խողովակների վերաարտահանումը, վերահայտարարագրումը այլ մաքսային ընթացակարգով, ինչպես նաև չի ապահովել դրանց ձևակերպումը «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով: Արդյունքում Մեխակ Գաբրիելյանի կողմից թույլ է տրվել մաքսային

օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մաքսային կանոնների խախտում:

Գանգատում բերված պնդումները, որ Որոշումը կայացվել է առանց քննության առնելու գործի իրավական փաստական հանգամանքները, մասնավորապես՝ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ խախտումը պայմանավորված է եղել Առեկսիմ բանկի հարուցած խոչընդոտներով, այն է՝ Բանկը, «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ շենք-շինություններն ու հիմնական միջոցները դարձրել է իր անունով, որի հետևանքով ընկերությանը զրկվել է գործունեություն ծավալելու հնարավորությունից, հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ:

Եթե «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ-ն, ի դեմս նրա տնօրեն Մեխակ Գաբրիելյանի, գտնում էր, որ Առեկսիմ բանկի անօրինական գործողությունների հետևանքով ընկերությանը զրկվել է գործունեություն ծավալելու հնարավորությունից, ապա ընկերության տնօրեն Մեխակ Գաբրիելյանը կարող էր (ինչ-որ չափով նաև պարտավոր էր) Բանկի կողմից իրականացված ապօրինի գործողությունները վիճարկել դատական կարգով: Այսինքն, ՀՀ օրենսդրությամբ ընկերության տնօրենին իրավունք է եղել վերապահված իր լիազորությունների շրջանակներում համապատասխան գործողություններ կատարելու միջոցով ընկերության շահերը պաշտպանելու ուղղությամբ, ինչը, սակայն, նրա կողմից չի կատարվել: Հետևապես, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունների չկատարումն ընկերության և Առեկսիմ բանկի միջև ծագած հարաբերությունների վատթարացման հետևանքներով պատճառաբանելու ընկերության տնօրենի փորձերը հիմնավոր չեն և չեն բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ընկերության տնօրեն Մեխակ Գաբրիելյանի կողմից թույլ է տրվել մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մաքսային կանոնների խախտում, այն է՝ Մեխակ Գաբրիելյանի կողմից սահմանված ժամկետում չի ապահովվել վերոգրյալ 126.575 կգ խողովակների վերաարտահանումը, վերահայտարարագրումը այլ մաքսային ընթացակարգով, ինչպես նաև չի ապահովվել դրանց ձևակերպումը «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի 18.05.2015 թ-ի վարչական տույժ նշանակելու մասին թիվ 104/10 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝


Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ